Sapiens

ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Bookmark

Yuval Noah Harari
David Vandermeulen, Daniel Casanave

Sapiens

A Graphic History

Volume 1
The Birth of Humankind

Bookmark

Յուվալ Նոյ Հարարի
Դեյվիդ Վանդերմյուլեն, Դենիել Կազանավ

Sapiens

Մարդկության պատկերազարդ պատմությունը

Հատոր 1

Մարդկության ծնունդը

Թարգմանությունն անգլերենից՝
Լիանա Զաքարյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2023

Bookmark

ՀՏԴ 93/94:572.1/.4
ԳՄԴ 63.3+28.712
Հ 390

Հ 390 Sapiens: Մարդկության պատկերազարդ պատմությունը /
Յուվալ Նոյ Հարարի.- Եր.: Newmag, 2023. Հատոր 1.- 248 էջ:

«Sapiens. Մարդկության պատկերազարդ պատմությունը» Յուվալ Նոյ Հարարիի գրքի պատկերավոր ադապտացիան է: 100,000 տարի առաջ Երկրի վրա ապրում էր մարդկային առնվազն 6 ցեղատեսակ, այսօր՝ միայն մեկը՝ Homo sapiens-ը: Ի՞նչ պատահեց մյուսների հետ, ու ի՞նչ է սպասվում մեզ: Պատկերազարդ գրքի 1-ին հատորը պատմում է մարդկության ստեղծման և զարգացման մասին: Ինչպե՞ս են կենսաբանությունն ու պատմությունը ձևավորել մեզ, և ի՞նչ է նշանակում լինել «մարդ»: Գլոբալ էկոհամակարգում մարդկանց դերից մինչև կայսրությունների վերելք սապիենսը մեզ մղում է վերանայել մեր համոզմունքները, անցյալի զարգացումները կապել ժամանակակից մտահոգությունների հետ և իրադարձություններին նայել ավելի մեծ գաղափարների համատեքստում: Գունավոր նկարազարդումներն ուղեկցվում են դյուրըմբռնելի տեքստերով:

ՀՏԴ 93/94:572.1/.4
ԳՄԴ 63.3+28.712

ISBN 978-9939-884-76-9
Յուվալ Նոյ Հարարի «Sapiens. Մարդկության պատկերազարդ պատմությունը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Copyright © 2020 by Yuval Noah Harari all rights reserved.

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:
Թարգմանությունն իրականացվել է հեղինակի հետ կնքված պայմանագրով:

Bookmark

Պատմության ժամանակագրություն

Տարիներ առաջ	
13.8 միլիարդ	Ի հայտ են գալիս մատերիան և էներգիան: Ֆիզիկայի սկիզբ: Ատոմների և մոլեկուլների ձևավորում: Քիմիայի սկիզբ:
4.5 միլիարդ	Երկիր մոլորակի ձևավորում:
3.8 միլիարդ	Օրգանիզմների առաջացում: Կենսաբանության սկիզբ:
6 միլիոն	Մարդկանց և շիմպանզեների վերջին ընդհանուր տատիկը:
2.5 միլիոն	Մարդիկ առաջանում են Աֆրիկայում: Առաջին քարե գործիքներ:
2 միլիոն	Մարդիկ տարածվում են Աֆրիկայից դեպի Եվրասիա: Մարդկային տարբեր տեսակների էվոլյուցիա:
500,000	Նեանդերթալցիները սկսում են զարգանալ Եվրոպայում և Մերձավոր Արևելքում:
300,000	Կրակի ամենօրյա օգտագործում:
200,000	*Հոմո սապիենսը* սկսում է զարգանալ Աֆրիկայում:
70,000	Կոգնիտիվ հեղափոխություն: Պատմասացության առաջացում: Պատմության սկիզբ: Սապիենսները տարածվում են Աֆրիկայում:
50,000	Սապիենսները բնակություն են հաստատում Ավստրալիայում: Ավստրալիայի մեգաֆաունայի ոչնչացում:
30,000	Նեանդերթալցիների անհետացում: Հոմո սապիենսը՝ մարդկային միակ ողջ մնացած տեսակ:
16,000	Սապիենսները բնակություն են հաստատում Ամերիկայում: Ամերիկյան մեգաֆաունայի ոչնչացում:

12,000	Երկրագործական հեղափոխություն։ Բույսերի և կենդանիների ընտելացում։
5000	Առաջին թագավորությունները, գիր և փող։ Բազմաստված կրոններ։
4250	Առաջին կայսրությունը. Սարգոնի Աքքադական կայսրություն։
2500	Մետաղադրամների գյուտը. համընդհանուր փող։ Պարսկական կայսրություն. համընդհանուր քաղաքական կարգ։ Բուդդիզմը Հնդկաստանում. համընդհանուր ուսմունք։
2000	Հանկայսրությունը Չինաստանում։ Հռոմեական կայսրությունը Միջերկրականում։ Քրիստոնեություն։
1400	Իսլամ։
500	Գիտական հեղափոխություն։ Մարդկությունն ընդունում է իր տգիտությունը և սկսում աննախադեպ ուժ հավաքել։ Եվրոպացիները սկսում են նվաՀել Ամերիկան և օվկիանոսները։ Ամբողջ մոլորակը վերածվում է պատմական մեկ ասպարեզի։ Կապիտալիզմի վերելք։
200	Արդյունաբերական հեղափոխություն։ Ընտանիքին և համայնքին փոխարինում են պետությունն ու շուկան։ Բույսերի և կենդանիների զանգվածային ոչնչացում։
Ներկա	Մարդիկ հատում են Երկիր մոլորակի սահմանները։ Միջուկային զենքը սպառնում է մարդկության գոյությանը։ Օրգանիզմներն աստիՀանաբար ավելի շատ են ձևավորվում ոչ թե բնական ընտրության, այլ խելացի դիզայնի շնորհիվ։
Ապագա	Խելացի դիզայնը դառնում է կյանքի հիմնական սկզբո՞ւնքը։ Առաջին ոչ օրգանական կյանքի ձևե՞րը։ Մարդիկ աստվա՞ծ են դառնում։

Սավաննայի
ապստամբները

Bookmark


Մոտ 14 միլիարդ տարի առաջ, այսպես կոչված, «Մեծ պայթյունից» առաջացան մատերիան, էներգիան, ժամանակն ու տարածությունը:
Մեր տիեզերքի այս էական առանձնահատկությունների մասին պատմությունը կոչվում է ֆիզիկա:


Ի հայտ գալուց մոտ 300,000 տարի անց մատերիան և էներգիան սկսեցին միաձուլվել՝ վերածվելով բարդ կառուցվածքների, որոնք անվանում ենք ատոմներ:
Ատոմների միաձուլումից առաջացան մոլեկուլները:
Ատոմների, մոլեկուլների և դրանց փոխազդեցությունների մասին պատմությունը կոչվում է քիմիա:
Մոտ 4 միլիարդ տարի առաջ Երկիր մոլորակի վրա որոշ մոլեկուլների միավորումից առաջացան մեծ ու բարդ կառուցվածքներ, որոնք անվանում ենք օրգանիզմներ:
Օրգանիզմների մասին պատմությունը կոչվում է կենսաբանություն:
Իսկ մոտ 70,000 տարի առաջ օրգանիզմների որոշ տեսակներ՝ մարդիկ, սկսեցին ձևավորել էլ ավելի բարդ կառուցվածքներ, որոնք կոչվում են մշակույթներ:
Մարդկային մշակույթների զարգացումը կոչվում է պատմություն:

Ներեցեք, ես նույնիսկ չներկայացա:
Ողջո՛ւյն: Իմ անունը Յուվալ Նոյ Հարարի է:
Ես պատմաբան եմ:

Գիտեմ՝ ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության մասին խոսելը պատմաբանների գործը չէ...

Նրանք սովորաբար խոսում են Ֆրանսիական հեղափոխության նման բաների մասին:

Բայց իրականում մարդկության պատմությունն ուղղակի շարունակությունն է ֆիզիկայի...
ԷՅՆՇՏԵՅՆ


քիմիայի...
ԿՅՈՒՐԻ

և կենսաբանության...
ԴԱՐՎԻՆ

Մենք չենք կարող հասկանալ Ֆրանսիական հեղափոխության նման բաները, մինչև չհասկանանք՝ ինչպես են մարդիկ զարգացել:
Մարդիկ կենդանիներ են, և այն ամենը, ինչ տեղի է ունեցել պատմության մեջ, ենթարկվել է ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության օրենքներին:
ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ
ՔԻՄԻԱ
ՄԱՆԲԱԴԻՏԱԿ
լաբ. թեստեր


Մարդիկ եղել են պատմությունից շատ առաջ: Առաջին մարդիկ տարածվել են հենց այստեղ՝ Արևելյան Աֆրիկայում:
AFRICA
2.5 միլիոն տարի առաջ...
Տեսնո՞ւմ եք այն փոքր խումբը:
Նրանք մեր հին նախնիներն են:
Նրանց վարքը ձեզ ծանոթ չի՞ թվում:
Բայց նրանք գորիլլաներից շատ չէին տարբերվում:
...ոչ էլ փղերից:
...կամ թռչուններից:
Հշմարտություն է՝ առաջին մարդկանց մեջ առանձնահատուկ ոչինչ չկար: Նրանք սովորական կենդանիներ էին, որոնք շրջակա միջավայրի վրա նույնքան ազդեցություն ունեին, որքան բաբունները, լուսատտիկները կամ մեղուզաները: Չկար ոչ մի նշան, որ մի օր նրանք կնվաճեն և կփոխեն ամբողջ աշխարհը:


Այս գիրքը կբացատրի, թե ինչու ամեն ինչ այլ կերպ ստացվեց...
Գետաձին անում է մեկ փոքր քայլ, կաթնասունները՝ մեկ հսկա թռիչք:

Նախնադարյան մարդկանց մի կարևոր առանձնահատկություն կա. բոլորը նույն տեսակին չէին պատկանում:
Մեր օրերում աշխարհի մարդիկ կարող են տարբեր տեսք ունենալ ու տարբեր լեզուներով խոսել, բայց բոլորս նույն տեսակն ենք՝ հոմո սապիենս:

Սա, իհարկե, զարմանալի է: Կան մրջյունների, օձերի և արջերի տարբեր տեսակներ:
Ուրեմն ինչո՞ւ չպետք է լինեն մարդկանց տարբեր տեսակներ:

Մինչև 50,000 տարի առաջ մեր մոլորակի վրա ապրում էր մարդկանց առնվազն վեց տարբեր տեսակ: Լիլիպուտների կղզում, օրինակ, գաճաճներ էին:
ԶԸՆԳ ԶԸՆԳ
Ո՞վ է:
Ներեցեք, դռան զանգն է:
Ողջո՛ւյն, քեռի՛ Յուվալ:
Զոռի՛, ճիշտ ժամանակին ես եկել: Քեզ բան ունեմ ցույց տալու:
Խաղաթո՞ւղթ:
Ի՞նչ զվարճալի է: Կարո՞ղ ենք խաղալ:
Իհարկե, կարող ենք:
Այ կտեսնես՝ դուրդ շատ կգա:

ՀՈՄԻՆԻՆՆԵՐ

ՀՈՄՈ ԷՐԵԿՏՈՒՍ
Մականունը՝ Ուղիղ քայլող մարդ

ՀՈՄԻՆԻԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ 50,000 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Բնակության վայրը՝ ամբողջ Ասիան +5

Գոյատևել է -2 միլիոնից մինչև -50,000 +7

Առանձնահատկությունը՝ ամենաերկարը գոյություն ունեցած մարդ ցեղի տեսակ +8

Ուժեղ կողմը՝ առաջինն է օգտագործել կրակը և որս անելու զենքեր պատրաստել +4

Թույլ կողմը՝ նույն զենքերը պատրաստել է հարյուրհազարավոր տարիներ շարունակ +1

ՀՈՄՈ ՆԵԱՆԴԵՐԹԱԼԵՆՍԻՍ
Մականունը՝ Նեանդերթալյան մարդ

ՀՈՄԻՆԻԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ 50,000 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Բնակության վայրը՝ Եվրոպա և Արևմտյան Ասիա +6

Գոյատևել է -400,000-ից մինչև -30,000 +3

Առանձնահատկությունը՝ շատ մեծ ուղեղ, խիստ մկանուտ +4

Ուժեղ կողմը՝ դիմացկուն էր Սառցե դարաշրջանի կլիմային, հոգ էր տանում մեծահասակների և հաշմանդամների մասին +6

Թույլ կողմը՝ շատ հեռու էր հաղորդակցվելուց, մուլտֆիլմերի սիրված հերոս է -1

ՀՈՄՈ ԼՈՒԶՈՆԵՆՍԻՍ
Մականունը՝ Մարդը Լուզոն կղզուց

ՀՈՄԻՆԻԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ 50,000 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Բնակության վայրը՝ Լուզոն, Ֆիլիպիններ +1

Գոյատևել է -700,000-ից մինչև +50,000 +5

Առանձնահատկությունը՝ թաղի նորեկները հայտնաբերվել են միայն 2019-ին +1

ղ կողմը՝ սովոր է ապրել արևադարձային առներում +6

կողմը՝ հանրային կապերի իսպառ կայություն -2

ՀՈՄՈ ԴԵՆԻՍՈՎԱԿ
Մականունը՝ Դենիսովցիներ

ՀՈՄԻՆԻԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ 50,000 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Բնակության վայրը՝ Սիբիր, Արևելյան Ասիա +3

Գոյատևել է -300,000-ից մինչև -50,000 +2

Առանձնահատկությունը՝ առեղծվածային է, նույնականացվել է ընդամենը մեկ բրածո մատով +2

Ուժեղ կողմը՝ չափազանց շփվող էր, աջուձախ կենակցում էր սապիենսների և նեանդերթալցիների հետ +5

Թույլ կողմը՝ մատները մտցնում էր, ուր պատահի -1

ՀՈՄՈ ՍԱՊԻԵՆՍ
Մականունը՝ Բանական մարդ

ՀՈՄԻՆԻԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ 50,000 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Բնակության վայրը՝ ամենուր, նույնիսկ Լուսնի վրա +10

Գոյատևել է -300,000-ից մինչև հիմա: Հնարավոր է՝ վերանա մինչև 2100 թ. +4

Առանձնահատկությունը՝ կարծում է, թե բոլորից խելացի է +0

Ուժեղ կողմը՝ լավ է գործիք պատրաստում՝ ատամի խոզանակից մինչև ատոմային հրթիռ +10

Թույլ կողմը՝ մեծ էգո ունի, ուրախությամբ հավատում է անհեթեթությունների -3

ՀՈՄՈ ՖԼՈՐԵՍԻԵՆՍԻՍ
Մականունը՝ Ծառիկ մարդ, Հոբիթ

ՀՈՄԻՆԻԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ 50,000 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Բնակության վայրը՝ Ֆլորես կղզի, Ինդոնեզիա +1

Գոյատևել է -800,000-ից մինչև -50,000 +3

Առանձնահատկությունը՝ գաճաճ տեսակ, հասակը՝ մոտ 1 մետր, քաշը՝ մոտ 25 կգ +2

Ուժեղ կողմը՝ որսում էր կղզու գաճաճ փղերին և հսկա մողեսներին +4

Թույլ կողմը՝ տնակյաց էր, կղզուց երբեք դուրս չէր գալիս +1